ՄԵՐ ՀՈԲԵԼՅԱՐՆԵՐԸ

ԱՐՏԱՇԵՍ ԿԱՐԻՆՅԱՆ

(Մենդյան 90-ամյակի առթիվ)

Գրական, հրապարակախոսական, քաղաքական և գիտական գործունեության հարուստ ճանապարհ է անցել ակադեմիկոս Արտաշես Բալասիի Կարինյանը՝ Ստեփան Շահումյանի և Այլոշա Ջափարիձեի, Վահան Տերյանի և Աշոտ Հովհաննիսյանի սերնդակիցն ու աշխատանքային ընկերը, Բաքվի Կոմունայի կոմիսարը:

Սկսած 1905 թ., երբ դեռևս գիմնազիայի աշակերտ նա մասնակցում էր Բաքվի բանվորական գործադուլներին ու աշակերտական շարժումներին և խմբագրում աշակերտական «Набат» հանդեսը, նրա գործունեությունն անխզելիորեն կապվում է Լենինյան բոլշևիկյան կուսակցության պատմության հետ: 1906 թ. Պետերբուրգի համալսարանի ուսանողը մխրճվում է մայրաքաղաքի հեղափոխական պայքարի ոլորտները, մասնակցում քաղաքական վեճերին ու հուզումներին, իսկ 1907 թ. ընդունվում է ՌՍԴԲ կուսակցության շարքերը: Նույն թվականին մի խումբ ուսանողների հետ Ա. Բ. Կարինյանը ուղևորվում է Ֆինլանդիա՝ լսելու Վ. Ի. Լենինի զեկուցումը, որը կազմակերպվել էր Պետերբուրգի բոլշևիկ ուսանողության նախաձեռնությամբ:

1910 թ. ավարտելով համալսարանի իրավաբանական ֆակուլտետը, Ա. Կարինյանը վերադառնում է Բաքու և Ստ. Շահումյանի ղեկավարությամբ հեղափոխական-պրոպագանդիստական աշխատանք տանում Բաքվի բանվորների շրջանում: Նա միաժամանակ հոդվածներով հանդես է գալիս ժամանակի պարբերականների և, մասնավորապես, բոլշևիկյան «Պրավդայի» էջերում: 1913 թ. հեղափոխական գործունեության համար Ա. Կարինյանն աքսորվում է. Բաքու է վերադառնում միայն Փետրվարյան հեղափոխությունից հետո: Այստեղ նա շարունակում է իր հեղափոխական գործունեությունը և գործուն մասնակցություն ունենում Բաքվի Կոմունայի ստեղծմանը: Բաքվի կոմիտեի որոշումով նա խմբագրում է «Известия Бакинского совета РСК депутатов» հանդեսը, ընտրվում է Կոմունայի արդարադատության ժողովրդական կոմիսար:

Կոմունայի պարտությունից հետո Ա. Բ. Կարինյանն աշխատում է Մոսկվայի Ազգությունների Կոմիսարիատին կից հայկական գործերի կոմիսարիատում, որպես բաժնի վարիչ և միաժամանակ խմբագրում «Կոմունիստ» ամսագիրը և «Կարմիր դրոշակ» թերթը: Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո Ա. Կարինյանը փոխադրվում է Երևան, որտեղ աշխատում է նախ իբրև հանրապետության արդարադատության ժողովրդական կոմիսար, ապա՝ Հայաստանի Կենտգործկոմի նախագահ (1924—1928) և Լուսավորության Ժողկոմի տեղակալ (1929—1930):

Բոլոր այդ տարիներին և հետագայում Ա. Կարինյանն զբաղվել է հրապարակախոսական-լրագրական գործունեությամբ, խմբագրել «Նոր ուղի» (Երևան), «Народное хозяйство Закавказья» (Թբիլիսի) պարբերականները, հրատարակել մի շարք գրքեր և բրոշյուրներ, կազմել և ընդարձակ առաջաբանով տպագրել Ստեփան Շահումյանի «Երկերի» երկհատորյակը (առաջինը՝ սովետական շրջանում):

1921 թ. Ա. Բ. Կարինյանը գործուղվել է ԱՄՆ, որտեղ հայ աշխատավորության համար կարդացել է մի շարք զեկուցումներ և հանդես եկել մամուլում:

1941 թ. Ա. Կարինյանը բացառապես նվիրվել է գիտական աշխատանքին: Նա 1956 թ. ընտրվել է ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի իսկական անդամ:

Որ բնագավառում էլ որ աշխատել է Ա. Բ. Կարինյանը, պրակտիկ հեղափոխական, պետական-քաղաքական, գիտական, գրական կամ հրապարակախոսական,

ամենուր դրսևորել է բոլշևիկ քաղաքացու անձնուրաց նվիրվածություն դեպի գործը, գիտական հնչայական էրուդիցիա, հրապարակախոսի և հռետորի անբասիր տաղանդ: Նրա աշխատություններն ապշեցնում են հեղինակի հետաքրքրասիրությունների լայն շառավիղով, նրա՝ մարքսիստ հրապարակախոսի աշխարհայացքի և պրակտիկ գործունեության նախանձելի ներդաշնակությամբ:

Ա. Բ. Կարինյանի հրապարակախոսական գործունեությունը սերտորեն կապված է մեր կուսակցության քաղաքական պայքարի հետ նախահեղափոխական տարիներին և հեղափոխությունից անմիջապես հետո: Գիտնականի «Երկերի ժողովածուի» առաջին հատորը (1934 թ.) ընթերցողին է ներկայացնում 1915—1928 թթ. ռուսական և հայ բոլշևիկյան մամուլում հրատարակված նրա հրապարակախոսական հոդվածները:

Քաջ գիտակցելով, որ հայ ժողովրդի ճակատագիրն անխզելիորեն կապված է սոցիալիստական հեղափոխության հետ Ռուսաստանում և ապա նորաստեղծ սովետական կառավարության հետ, Ա. Կարինյանն ամենօրյա ուշադրության կենտրոնում էր պահում Սովետական Ռուսաստանի առօրյան: Քաղաքացիական կռիվները երկրում, Բաքվի Կոմունայի հերոսական էպոպեան, Անդրկովկասյան Ֆեդերացիան, Խորհրդային Ռուսաստանը և Արևելքը հարցեր էին, որոնք նա լուսաբանում էր ժամանակի մամուլի էջերում («Петербургская правда», «Северная Коммуна», «Խորհրդային Հայաստան», «Заря Востока» և այլն):

1918 թ., երբ հեղափոխությունը նոր էր հաղթանակել Բաքվում, Կարինյանն իր «Ն. Գ. Չերնիշևսկին հեղափոխական իշխանության խնդիրների մասին» հոդվածում, օգտագործելով 1848 թ. հեղափոխական իրադարձությունների առիթով Չերնիշևսկու տված գնահատականները ժամանակի քաղաքական կուսակցություններին, վեր է հանում մեծ մտածողի հոդվածի այժմեական նշանակությունը և ընդգծում հեղափոխական դասակարգի անզիջում պայքարի անհրաժեշտությունը 1918 թ. շիկացած օրերին:

Իր հոդվածներում Ա. Կարինյանը մերկացրել է դաշնակցականների և հայ մենշևիկների դիրքորոշումը հայկական հարցում, դաշնակցական կառավարության ապիկարությունը հայ ժողովրդի կյանքի ճակատագրական պահերին: Այսպես, «Իմպերիալիստական պատերազմը և Հայաստանը» հոդվածաշարում, որն առանձին բրոշյուրով հրատարակվել է 1925 թ., Կարինյանը մերկացնում է արևմտյան իմպերիալիզմի, «քաղաքակիրթ Արևմուտքի» դերը արևմտահայության ողբերգության մեջ: 1926 թ. տպագրված «Հայ ազգայնականների ուղին» ժողովածուում զետեղված հոդվածներով Ա. Կարինյանը պատասխանել է արտասահմանյան թերթերում հրապարակված այն հոդվածների հեղինակներին, որոնք արդարացնելով դաշնակցության քաղաքականությունը, փորձում էին նսեմացնել բոլշևիզմի դերը հայ ժողովրդի փրկության գործում: Այսպես, «Ահարոնյանի «Բաց նամակը Չիչերինին» հոդվածում Կարինյանը պատմական անցքերի գիտական վերլուծումով հանգում է այն հետևության, որ 1920 թ. վերջին «հայ մեծամասնականներն ստանում են դաշնակներից վերջնականապես քայքայված և արյունաքամ մի երկիր և Ալեքսանդրապոլի պայմանագրի ծանր շղթաները: *Մեծամասնականներին հաջողվում է Խորհրդային Ռուսիայի օժանդակությամբ քանդել Ալեքսանդրապոլի պայմանագիրը, ստեղծել ամուր պետություն և սկիզբ դնել հայ ժողովրդի վերածնական շարժմանը*»[2] (ընդգծումը հեղինակինն է):

1928 թ. Ա. Կարինյանը հրապարակում է «Նացիոնալիզմի «Նոր դիրքերը» բրոշյուրը, որտեղ զետեղված հոդվածներում քննարկվում էին այդ օրերի հրատապ քաղաքական հարցերը: Նա հանգամանալից վերլուծության է ենթարկում Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո արտասահմանյան երկրներում գործող և միջազգային ռեակցիային հարած հայ գրչակների ելույթները: Այս շարքի հոդվածներից բանավիճային առանձին փայլով է գրված «Հին երգեր» հոդվածը, ուղղված դաշնակցական մամուլի օրգանների դեմ, որոնք

---

1 *Ա. Կարինյան, Երկերի ժողովածու, հատ. I, Երևան, 1934, էջ 103։*

2 *Նույն տեղում, էջ 274։*

զրպարտելով Սովետական Հայաստանի առօրյան, ապակողմնորոշում էին իրենց ընթերցողներին:

Արտաշես Կարինյանի հոդվածները վեր են հանում հայ մարքսիստ հրապարակախոսի ինքնատակալաց գործունեությունը, և ցույց տալիս, թե ինչպես բոլշևիկյան կուսակցությանը զինվորագրված հրապարակախոսը, ոչ միայն գրչով, այլև բանիվ իր ողջ գիտակցական կյանքում ծառայել է հարազատ ժողովրդի երջանկության գործին:



Արտաշես Բալասիի Կարինյանն իր հրապարակախոսական գործունեությանը զուգընթաց մեծ ժամանակ է նվիրել և գրականագիտական զբաղումներին: «Դեմքեր և դեպքեր» (1928), «Գրական արձագանքներ» (1955) և «Գրական-քննադատական հոդվածներ» (1962) ժողովածուներում զետեղված են գիտնականի գրականագիտական և գրական-քննադատական հոդվածները: Ա. Կարինյանն առաջիններից մեկն է հայ մարքսիստ քննադատներից, որ դեռևս իր գործունեության վաղ շրջանում, 1910-ական թթ., վեր է հանել ռեալիստական գրականության նշանակությունը աշխատավորության գաղափարական դաստիարակության գործում, մեծապես օժանդակել հայ պրոլետարական գրականության ստեղծման ու զարգացման պրոցեսին:

Դեռևս 1924 թ. տպագրված «Պրոլետարական գրականության մասին» իր արժեքավոր հոդվածում Ա. Կարինյանը քննության է առել պրոլետարական գրականության նոր ձեռքբերումների, զարգացման տենդենցների և անցնելիք ճանապարհի հեռանկարների հետ կապված հարցերը: Շատ հետաքրքրական է, որ խոսելով պրոլետարական գրականության զարգացման ուղիների մասին, Ա. Կարինյանը մեծ շրջահայեցությամբ խուսափում է բացառապես «ֆաբրիկա-գավոդային» թեմատիկայով տարվելու գայթակղությունից և պահանջում, որ պրոլետարական գրողները դիմեն կյանքին, գյուղական թեմաներին, խոսեն պատերազմի և սիրո մասին, «շոշափեն այսօրվա կյանքի բոլոր երևույթներն ու ներհակությունները»: Այս սկզբունքով էլ գրականագետը քննադատում է ֆուտուրիստական ուղղությունը ժամանակի

գրականության մեջ, նոր դասակարգի արվեստը անցյալի ժառանգությունից կտրելու հակապատմական տեսությունը: Ա. Կարինյանն ընդվզում է սովետական գրականությունը դասական գրականության արմատներից խզելու այդ ջանքերի, «զուտ պրոլետարական պոեզիա» ստեղծելու ոմանց անպտուղ ճիգերի դեմ: Նա հայ գրողներին ուսուցանում է պրոլետարական գրականության էական հատկանիշը դարձնել ոչ թե դրա՝ արհեստականորեն ձևված պրոլետարական թեմատիկան, այլ հիմնական գաղափարական հագեցված բովանդակությունը, այն է՝ «հեղափոխական ինտերնացիոնալիզմը, նրա դասակարգային շեշտը և հասարակական ուրույն իմաստասիրությունը»[3]:

Արտաշես Կարինյանն առանձին ակնարկներ է նվիրել Աբովյանի, Շիրվանզադեի, Չարենցի, Տերյանի, Արազու ստեղծագործություններին, մշտապես հետևել հայ նոր գրականության զարգացման ընթացքին, վեր հանել Հոկտեմբերյան հեղափոխության վճռական նշանակությունը հայ մշակույթի և գրականության ծաղկման գործում: «Լռիշե Չարենցի ստեղծագործական ուղին» հոդվածում քննության են առնված Չարենցի վաղ շրջանի պոեզիայի առանձնահատուկ գծերը, այդ պոեզիայի հետագա վերելքի ազդակների պրոբլեմը: Պատմականության ոգով գրված այս հոդվածը, որ Կարինյանի գրական վաստակի ցայտուն էջերից է, վկայում է հեղինակի գեղագիտական մեծ էրուդիցիայի մասին:

Ակադեմիկոս Կարինյանն անդրադարձել է հայ և ռուս գրական կապերի պատմությանը, բազմաթիվ փաստերով հանգել այն ճշմարտությանը, որ ռուս գրականությունն իր բարձր գաղափարականությամբ և հումանիստական ոգով մշտապես գրավել է հայ գրողներին, նպաստել հայ գրականության ու մշակույթի առաջընթացին: Առանձնահատուկ սիրով է գրականագետը կանգ առնում 60-ական թթ. գործիչների, Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի, Նալբանդյանի գործունեության, նրանց գրական կապերի և առնչությունների հարցի վրա. «Մ. Նալբանդյանը և 60-ական թվականների ռուս առաջավոր գործիչները» հոդվածում քննության է առնվում ռուսական հեղափոխական-դեմոկրատական հրապարակախոսության ազդեցության հարցը հայ հրապարակախոսական մտքի վրա:

Քաջածանոթ սովետական երկրի բազմազգ ժողովուրդների և եվրոպական երկրների գրականությանն ու մշակույթին, Կարինյանը նույն խորությամբ է գրում Ա. Ռադիշչևի և Տ. Շևչենկոյի, Բայրոնի և Ստենդալի, Ռ. Ռոլանի ստեղծագործության մասին: Սակայն գրականագետի հետաքրքրասիրություններն այնուամենայնիվ հիմնականում մնում են ռուսական դասական գրականության ոլորտներում: Նրան հավասարաչափ հարազատ են Պուշկինի պոեզիան և Գոգոլի արձակը, Նեկրասովի և Չեխովի, Գորկու և Զուկովսկու ստեղծած համամարդկային արժեքները:

Արտաշես Կարինյանի գրականագիտական հետազոտությունների մեջ առանձնահատուկ տեղ է գրավում Միքայել Նալբանդյանի ժառանգության գնահատականի հարցը: Այդ թեմային գիտնականն անդրադարձել է իր ստեղծագործական կյանքի գրեթե բոլոր փուլերում: Ականավոր նալբանդյանագետ Աշոտ Հովհաննիսյանի հետ միաժամանակ Կարինյանը մանրակրկիտ կերպով զբաղվել է Նալբանդյանի կյանքի տարեգրությամբ, ուսումնասիրել նրա աշխարհայացքի հիմնական ակունքները, հետազոտել Նալբանդյանի կենսագիրների ուսումնասիրությունները, նորովի ընթերցելով մեծ հրապարակախոսի կյանքի զանազան դրվագների սկզբնապատճառներն ու դրանց բուն էությունը:

1928 թ. տպագրված «Միքայել Նալբանդյան» ուսումնասիրությունում Կարինյանն առաջին անգամ հայ իրականության մեջ օգտագործում է Լենինի հրապարակումները և մեկնաբանում Նալբանդյանի հարցաքննության հետ կապված մի շարք խնդիրներ[4]: Կարինյանը փորձում է, հենվելով «իրական փաստերի, առարկայական փաստերի և ամենից առաջ հենց Նալբանդյանի և նրա ժամանակակիցների գրությունների անկողմնապահ տեսության և քննության վրա», ունաչառ լուսաբանել «իսկական և իրական Նալբանդյանի հասարակական դեմքը»: Հետաքրքրական այս ուսումնասիրության մեջ Կարինյանը քննության է առնում երեք հիմնական

---

3 Ա. Կարինյան, Դեմքեր և դեպքեր, 1928, էջ 252։

4 Տե՛ս նույն տեղում, էջ 53—137։

պրոբլեմ՝ Նալբանդյանի գործունեության առաջին, նախիջևանյան շրջանի նշանակության հարցը՝ նրա աշխարհայացքի ձևավորման գործում, Նալբանդյանի և Նազարյանցի համագործակցության և նրանց աշխարհայացքային տարբերությունների խնդիրը, «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատության գնահատականը:

Նոր Նախիջևան քաղաքի հասարակական կյանքի ֆոնի վրա վերլուծության ենթարկելով Նալբանդյանի կյանքի վաղ շրջանի փաստերը, Կարինյանը քայլ առ քայլ ներկայացնում է երիտասարդ գործչի ապրած կյանքը: Նա ընդգծում է այն միտքը, որ Հ. Խալիբյանի, Ներսես կաթողիկոսի և ողջ աղայական կուսակցության դեմ վարած պայքարը Նալբանդյանին ավելի է կապում մանր արհեստավորական և դեմոկրատական խավերի հետ, որով և մեծապես պայմանավորվում է նրա գաղափարների հետագա էվոլյուցիան: Վճռական նշանակություն տալով Նախիջևանի առանձնահատուկ միջավայրի ազդեցությանը, Կարինյանը գրում է. «Նալբանդյանը, որ այդ պայքարի ամենաուժեղ և արմատական ղեկավարն էր, իր մղած պայքարի ընթացքում էլ ստանում է կամքի և հայեցողության այն ամրությունը, որ հետագայում դարձնում է նրան նախ «Հյուսիսափայլի» մարտնչող հրապարակագիր, իսկ քիչ հետո՝ «Երկրագործության» հեղինակ[5]:

Առանձնահատուկ ուշադրությամբ Ա. Կարինյանը քննում է տասնամյակներ շարունակ հայ բանասիրությանն զբաղեցրած Նալբանդյան-Նազարյանց պրոբլեմը: Ամեն բանից առաջ միմյանցից սահմանազատելով այն սոցիալական հիմքը, որն ուղղություն էր տալիս երկու հրապարակախոսների գործունեությանը, Կարինյանը հենց դրանով էլ բացատրում է նրանց «տարբեր վերաբերմունքը բոլոր սնացյալ խնդիրների, առանձնապես կենսական և այժմեական պրոբլեմների նկատմամբ»: Կրկին անգամ հաստատելով, որ տարբեր խառնվածքի այդ գործիչները «զանազան մոտեցումով են լուսաբանել ժամանակակից իրականության երևույթները», Կարինյանը Նալբանդյանի մի շարք կենսագիրների կողմից նրա գործունեությունը հատկանշող բուռն խառնվածքը, «կրքոտությունը» վերագրում է «նրա ընդհանուր մարտական աշխարհայեցողությանը»: Չանտեսելով երկու հրապարակախոսներին միմյանց հետ կապող ընդհանուր շահագրգռությունները, հայ ժողովրդի լուսավորությանը ծառայելու նրանց բուռն ցանկությունների հաստատեղումը, Կարինյանն ապացուցում է հեղափոխական-դեմոկրատի բոլոր քայլերը պայմանավորում է դեմոկրատական-աշխատավորական խավերի սոցիալ-տնտեսական պահանջներին ծառայելու նրա սևեռուն ծրագրով:

Ա. Կարինյանն այնուհետև հիմնավորապես կանգ է առնում Նալբանդյանի գործունեության վերջին՝ արտասահմանյան ուղևորության, ռուսական հեղափոխական-դեմոկրատների հետ նրա ունեցած կապերի փուլի վրա: Այս բաժնում նույնպես, հենվելով պատմական հարուստ գրականության, Լեմկեի հրապարակած նյութերի վրա, Կարինյանը նշում է այն հետևողականությունը, որով Նալբանդյանը «կարողացել է յուրօրինակ հմտությամբ շաղկապել Գերցենի և Բակունինի ուրույն հայացքները կոնկրետ հայկական միջավայրի ինքնահատուկ պրոբլեմների հետ»: Այս առումով ուսումնասիրության մեջ հետաքրքրական է նախորդ նալբանդյանագետների տեսակետների քննությունը, տեսակետներ, որոնք կա՛մ նիհիլիստորեն մոռացության էին տալիս Նալբանդյան-հեղափոխականի դերը հայ հասարակական մտքի պատմության մեջ և կա՛մ, խոսելով Նալբանդյանի գործունեության վերջին շրջանի մասին, մոռացության էին մատնում «Հյուսիսափայլի» Նալբանդյանին:

«Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատության հանգամանալից վերլուծությամբ Ա. Կարինյանը հստակորեն նշում է Նալբանդյանի «հյուսիսափայլյան» շրջանի լուսավորական դեմոկրատական հայացքների էվոլյուցիան դեպի հեղափոխական դեմոկրատիզմը: Փաստերի մանրազնին վերլուծությամբ նա տեսանելի է դարձնում այն ճանապարհը, որը Նալբանդյանին տանում է համառուսական և եվրոպական հեղափոխական շարժումների ճակատը: Նալբանդյանի մեծությունը բացահայտող այս ուսումնասիրության մեջ է, որ Կարինյանն իրեն հեռու պահելով ամբողջ հարցն ասպառելու մտքից, այն կարծիքն է հայտնում, որ Նալբանդյանի

---

5 Նույն տեղում, էջ 105:

կյանքի թե՛ սկզբնական շրջանը և թե՛ «նրա հասարակական պայքարի առանձին փուլերն այնքան բնորոշ և ուշագրավ են, որ պետք է դառնան առանձին և ավելի մանրակրկիտ քննության առարկա մեր դիվաններում գտնվող և տակավին չմշակված նյութերի հիման վրա»[6]:

1940-ական թթ. հետո Արտաշես Կարինյանն ամբողջովին նվիրվեց հայ պարբերական մամուլի պատմության ստեղծման գործին: Չի կարելի ասել, իհարկե, թե անցյալներում հայ բանասերների կողմից փորձեր չեն եղել շարադրելու մեր պարբերական մամուլի թեկուզ առանձին հատվածների պատմությունը: Փորձեր եղել են: Հայ մամուլի պատմության հարցին առանձին ուսումնասիրություններով կամ զանազան աշխատություններում անդրադարձել են Գ. Գալեմքարյանը, Հարոն, Մ. Պոտուրյանը, Ալ. Երիցյանը, Լեոն և ուրիշներ: Հատուկ երախտագիտության արժանի է բանասեր Գարեգին Լևոնյանի աշխատանքը, որը գիտակցեց հայ պարբերական մամուլի մատենագիտական ցանկ ստեղծելու անհրաժեշտությունը՝ մամուլի պատմությունն ստեղծելուց առաջ: Հայտնի է, որ Գ. Լևոնյանը մի ամբողջ ստեղծագործական կյանք է նվիրել այդ գործին, սերունդներին հրամցնելով «Հայոց պարբերական մամուլը» մատենագիտական ցուցակը (1934): Լևոնյանի սկսածն արդեն կարելի էր շարունակել և այդ գործին ձեռնամուխ եղավ Արտաշես Կարինյանը:

Ակադեմիկոս Ա. Կարինյանի տարիների տքնաջան աշխատանքի արգասիքը երևան եկավ 1956 թ., երբ տպագրվեց նրա «Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության» մենագրության առաջին հատորը: 2-րդ հատորը լույս է տեսել 1960 թ.: Կատարված է հսկայական աշխատանք: Սեղանի վրա է Հնդկաստանի հայ գաղութում և եվրոպական երկրներում տպագրված հայ պարբերականների գիտական պատմությունը, որը համակողմանի իր ընդգրկումով նախօրինակը չունի: Գիտնականը շարունակում է աշխատանքները հերթական հատորների վրա:

Այսօր ամենայն վստահությամբ կարելի է հայտարարել, որ նախասովետական շրջանի հայ պարբերական մամուլի պատմության ստեղծումը մոտակա տարիների հարց է արդեն: Չէ՞ որ Ա. Կարինյանի իսկ նախաձեռնությամբ մեկ և կես տասնամյակ առաջ Հայաստանի գիտությունների ակադեմիայում ստեղծված հայ պարբերական մամուլի պատմության բաժինը (որի առաջին վարիչն էր Ա. Կարինյանը), պլանավորված աշխատանք է տանում այդ ուղղությամբ: Մեծ գիտնականի մշակած հիմնական սկզբունքները, պատմության շարադրման ուրույն մեթոդոլոգիան, գործին անվերապահորեն նվիրվելու նրա օրինակը հզոր կռվաններ են երիտասարդ գիտնականների համար՝ շարունակելու այն կարևոր խնդիրը, ինչպիսին է հայ ժողովրդի մամուլի պատմության ստեղծումը:

Հայ ժողովրդի տաղանդավոր զավակը միշտ եղել է իր ժողովրդի առաջավոր մտածողների ջոկատում, նոր կյանքի համար պայքարող մարտիկների առաջին շարքերում: Նա մեծ կրքով նետվել է գաղափարական պայքարի ասպարեզ և հակահարված տվել հակասովետական, դաշնակցական գրչակների հարձակումներին, իսկ երբ հասել է խաղաղ ստեղծագործական աշխատանքի պահը, տասնամյակների գիտական փորձն ի սպաս է դրել հայ ժողովրդի հոգևոր հարստության վերհանման և արժեքավորման գործին: Հիրավի, ակադեմիկոս Ա. Կարինյանի արգասալից կյանքը գրական և գիտական նոր սերնդին սխրանքների կոչող ազնիվ օրինակ է:

Մեր գիտական և գրական հասարակայնությունը գոհունակությամբ ընդունեց ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը՝ Հայաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Արտաշես Բալասիի Կարինյանին, նրա ծննդյան 90-ամյակի առթիվ, Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում շնորհելու և Լենինի շքանշան ու «Մուրճ ու մանգաղ» ոսկե մեդալ հանձնելու մասին:

Մ. ՄԽԻԹԱՐՅԱՆ

---

[6] Նույն տեղում, էջ 104։